

## ԱՐԱՐԱՏԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՎԱՆԱՆՔ\*

### Նարինե Հովհաննիսյան

1940-1980-ական թթ. հայ պոեզիայում որպես կորսված հայրենիքի գաղափարագեղագիտական խորհրդանիշ՝ Նարինե Հովհաննիսյանը տիրական է դաւնում Արարատ լեռան գրական պատկերը: Արարատապաշտությունը՝ որպես ծրագրային դաշտանը, խորհրդահայ բանարվեստում և, առհասարակ, ազգային գաղափարաբանության մեջ հրչակեց Հովհաննես Շիրազը: Ժամանակի ազգային կյանքում իր ծրագրային հայրենասիրական պոեզիայով Շիրազը բացառիկ երևույթ է, կորսված հայրենիքի վերածնունդն ազդարարող ոգեղեն ուժ: Նա ճեղքեց Արարատ տանող գրական ճանապարհի պաշտոնական ուղեկիցները՝ տևական լրությունից հետո վերստին կամուրջ ծգելով արևկան և կորուսյալ հայրենիքի ու հայրենագրկված սկզբուքի միջնորդ:

Ազգային-հայրենասիրական բանաստեղծությունը ժամանակին բրնձադատվում էր իշխող վարչակարգի կողմից: Հաղթահարելով պարտադրվող գաղափարական սահմանափակումները՝ Շիրազն ազատագրեց հայրենասիրական պոեզիայի ներքին տիրությունները, ոգի ներարկեց ազգային բեկված հոգեբանությանը, տվեց ազգային ինքնավատահություն՝ խորհրդային միապետության քաղաքական պայմաններում հնչեց-մելով իր էրգի օրինական ժառանգության պահանջատիրության արդար պոեզիան: 1960-1980-ական թթ. Շիրազն այլևս հոգևոր առաջնորդ ուժ էր, որ մի ամբողջ սերունդի մեջ դաստիարակել էր բրնձագավթված հայրենիքի ազատագրման գաղափարապաշտությունը: Կորուսյալ հայրենիքի գրական ճանապարհին Շիրազին ուղեկցում էր և համազգային- ժողովրդական փառքը, և ուղեկիցներին ոհմագրավելու ներքին կորությունը: Կորուսյալ հայրենիքի ազգային հանձարի խորհրդային սպանդին հաջորդած գաղափարական սիմենտական միապետությունը ու անկոնֆիլիկտայնության համահարթիչ մթնոլորտում բացարձակ հնչեցնել կորուսյալ հայրենիքի ազատագրման գաղափարը՝ ոգու սիրանք էր: Շիրազը նշանավորեց ազգային գիտակցության վերելքի շրջակույթ՝ դարնալով հայ դասի պահանջատերը գեղարվեստի միջոցով:

Պատմական հայրենիքի ազատագրման խանդավառ ոգին, որ Շիրազի հայրենապաշտ պոեզիայի դիմագիծն է, իր տեսակարար կշռով սերում է ժողովրդական ոգու վիպասարից՝ «Սասմա ժոեր»-ից: Գիրը խիզախն է, անկաշառ, զգացմունքը՝ տարերային, ներշնչանքը՝ բացարձակ: Բարն ու բանը ծովս ու բոց էր ժայթքում խորքից, ինչպես առասպելական եղեգան փողը: Արարատի քուրմն իր մեջ կրում էր արևմտահայ բանաստեղծական վերջին հանձարի «ցեղին սիրտը» և ցեղի ուժը, «ցեղին ցավն» ու ցեղի կորուվը:

Ոչ ոք չի կարող երգս կաշառել,

Դեպի Մասիս է երս աննահանջ...[1]

Արարատի գեղապատկերը հայ պոեզիայում ըստ էության անդրադարձվել է Ղ. Ալիշանի, Վ. Թեքեյանի, Վ. Տերյանի, Ե. Զարենցի բանաստեղծական արվեստում: Շիրազի արարատապաշտությունը հզոր է և ջրուտ, Արարատին վերահասնելու գաղափարը՝ աներկրա, զգայական պոռթկումը՝ հոսանուտ: Արարատի չափումով բանաստեղծն

\* Հորվածն ընդունվել է 23.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել թ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

աղաղակում է ցեղի բաղծանքն ու ցեղի պահանջը՝ կյանքի վերածնության սկզբունքով հավատալով նաև Արարատի ու Արարատով սկզբնավորվող հայրենիքի վերածնությանը:

Ղեր մի կարոտ ունեմ անհագ՝ հասնեմ Անի ու նոր մեռնեմ,  
Բանամ ճամփիս դրսերը փակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ...  
Բանտից հանեմ մեծ Հայաստան՝ այս ազատված փոքրիս խառնեմ,  
Գրկելով հողն իմ բովանդակ՝ հայկեմ Անին ու նոր մեռնեմ...  
Որպես ոսկի վաղվա գուշակ, որպես Սասիսին իմ անուշակ,  
Գլխին հայոց մի դրոշակ տեսնեմ Անին ... ու չմեռնեմ...[2]

Ցավի ու հրձվանքի հորձանուտներով, մտածությունների ու զգայությունների ալեկոծություններով «Մասիսապատումը», ըստ ամենայնի, բանաստեղծական եզակի երևոյթ է, տիպաբանական նորարարություն հայ գեղարվեստի համակարգում: Բանաստեղծական ներշնչանքը՝ անխառն, երևակայությունը՝ անսանծ, զգացմունքը՝ միստիկ: Շիրազն անհատականանում էր հայրենասիրական պոեզիայի պատմական ընթացքի մեջ ոչ միայն հույզերի անմիջական հորձանքով, բնական ռիթմով, ժողովրդական կենսախոհությամբ ու պատկերավոր պարզությամբ, այլև գաղափարագեղագիտական հստակ ծրագրով: «Նախընտրեցի երգել ցեղին սիրտը, որին բախյունները կզգայի իմ մեջ... իմ սեփական արյունիս խորը: Հայությունը կ'ուլար և կմռնչեր իմ մեջս» [3] սա ոչ միայն բանաստեղծական սերունդների ընդհանուր հոգեզգացողություն է, պոեզիայի ճակատագիր, այլև գեղարվեստական որոշակի ծրագիր:

Հանթն է բեկվում ճակտիս վրա,  
Մահ՝ չգիտեմ՝ կա՝, թե չկա...  
Ինձ ելնելու քարեր կան դեռ,  
Ինձ ելնելու սարեր կան դեռ,  
Մահեր, սարեր, դարեր կան դեռ...[4]

Ամբողջ բանաստեղծությունը ազգային ոգու հարանորոգ ուժի արտահայտություն է, արարատաբաղծության և արարատապաշտության բարձրագույն չափանիշ: Եթե նաիրյան պոեզիային ներհատուկ էր տառապագին խոհը, գոհաբերվող հայրենիքի գեղարվեստական պատկերը, Շիրազի «Մասիսապատում»-ում տիրական են ոգու կորուվը, հայրենի կորուսայլ եզերքների գունեղ հեռազգայությունը: Ազգային կարուտացավն իր ահօելի կշռով Շիրազի պոեզիայում համանիշ է պատմական կորուստն հետ բերելու ներքին գորության:

Օ, չէ, նա է ազգին ճամփան քարերն ի վեր, ի վեր Մասիս,  
Թող ամպ ու շանթ գլխիս ոռնան սարերն ի վեր, ի վեր Մասիս,  
Կտանեմ սիրտս վիրավոր, որպես դրոշ, Մասիս ի վեր,  
Թեկուզ մահով՝ կրածրանամ դարերն ի վեր, ի վեր Մասիս...[5]

Իր պոեզիայով Շիրազը կորուսայլ հայրենիքի ազատագրումը դարձեց բացարձակ գաղափար՝ նախանշելով համազգային վերազարթոնքի ուղին, գաղափարական հուժկու հակահարված տալով ժամանակի վաշքաբարքական հիմնայուններին, գրաքաղաքական մասիշ պայմաններում ընկրկելով, չգիծելով ոգու կորուվը. «Թեկուզ մահով՝ կրածրանամ դարերն ի վեր, ի վեր Մասիս» կամ՝ «Զեր լրության դեմ Մասիս եմ գոռում, //Այս էլ քառասուն տարի աննահանջ».[6]

Մինչ ահաշուր ճշում էին, թե՝ ծեր քաշենք Մասիսից,  
Մինչ կուգեին ինձ էլ պոկել աստվածաշենք Մասիսից՝  
Ես իմ որդոց անունները Սիս ու Մասիս կնքեցի;  
Որ հավիտյան ելնենք Մասիս՝ ծեր չքաշենք Մասիսից...[7]

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ազգային հիշողությունն կենսունակ պահող, դիմադարձելու կորով մերարկող բանաստեղծական հզոր արվեստ է սա՝ տառապանքի և հույսի գերազույն պոեզիա, ուր մակընթացությունները չունեն տեղատվություն մինչև վերելքի կամ վերադարձի վերջին հանգրվան։ Խոսքի գզացմունքային լիցքը, որին ասսիծանաբար միախառնվում է իմաստափրական խորհրդածությունը, ակունքում ունի նաև ժողովրդական երգի նրբերանգներ։ «Ճամփա տվեք, քար ու կապան, //Ճամփա տվեք ծոր ու ծապան, //Կարուտել եմ Սլիփան սարին, //Կարուտել եմ իմ աշխարհին...»։ [8] Բանաստեղծի խոսք-խորհրդը մերթ հնչում է որպես պատգամ՝ «Ինձ հոգեհանգիստ կատարեք միայն Մասիսի վրա», [9] մերթ որպես կտոր՝ «Քեզ Մասիսն եմ կոտակում, որ դու պահես հավիտյան...», մերթ որպես վերջին հրահանգ ու իղձ՝ «Ինձ թաղեք միայն Մասիսի լանջին», մերթ որպես ողբերգական տարակույսից ճառագող հույսի ցոլք. «Ոնց կարող է գերի մնալ Արարատու վիթխարի, //Կաղն օրոցքից դուրս կոստնես ժայրից ելքով Միերի...»։ [10] Հաջորդում են խոսքի պատկերային գյուտերը՝ խոհազգայական խտացվածքով, համապատկերային ընդգրկումներով. «Եվ իմ միակ տաճարն անմեռ... //Հայատան է հազարալեռ»։ Մասյաց մարմար գմբեթներով»։ [11] Կամ՝ «Հայոց վշտին կշռաքարը լոկ Մասիսը կիհնի...»։ [12]

Ճշմարիտ պոեզիայի չափանիշն, ըստ Շիրազի, գզացմունքայնությունն է։ Շիրազի բանաստեղծական տողի գզացմունքային լիցքը և՝ բնության տարերքի ուժգնությունն ունի՝ «Թեկուզ հարեն որդիներիս արյունով...», և տեղատվության խաղաղ մեղմությունը. «Հիմա ո՞վ է ծեզ համբուրում, //Ծովասարիս ծաղիկներ...// Ո՞վ է նայում Վանա ծովիս, //Ալիին Վանս, բոյսն կա՞...»։ [13] Ինչ խանդավառությամբ, պատկերային ատաղծով միջնադարի տաղերգուները սիրո փառաբանության երգեր էին արարում, նոյն գզայավառությամբ Շիրազն երկրպագում է կորուսյալ հայրենիքի խորհրդանիշերը՝ ուրվագծելով աշխարհագրական անուններով պատմականացվող տարածության և ժամանակի գեղարվեստական մի ամբողջ ճանապարհ։ «Տարբեր լարեր կան անոր քնարին վրա, - նկատում է Ալեն- Չավեն Սյուրմեյյանը. - թե՛ աշուղական, թե՛ քնարական, թե՛ փիլիխոփայական, և նկարագրով էլ, որպես մարդ, նա հրաբխային բանաստեղծ է»։ [14]:

Շիրազի ծրագրային հայրեներգությունն ունի աշխարհաքաղաքական որոշակի նախադրյաներ՝ կապված երկրորդ աշխարհամարտի հետ։ Գերազանցելով իր մեծ նախորդին՝ «Ես իմ Մասիս սարն եմ սիրում», Շիրազը վերահաստատում էր ազգային բանաստեղծության դիմագիծը՝ «Ես իմ Մասիս սարն եմ պաշտում», և դա ոչ միայն հստակ վերջնակետ նշանարդ գրական- գաղափարական ճանապարհի ընթացք էր, այլև նոր ու նորովի սկիզբ. «Այնքան պիտի Մասիս գոռամ, մինչև ես էլ նախսվեմ...»։ Մասիսվելու գաղափարը գեղարվեստական կոնկրետ պատկերի է վերածվում «Կուրգեի նստել մի քարի վրա...» սկսվածքով բանաստեղծության մեջ։ Հոգեկան ներքին գզայավառության պահը Արարատի հավերժությամբ ծովովելու ոգեղեն բարձրագույն վիճակ է. «Եվ նստած լոին այդ քարի վրա //Անդադար նայեմ իմ Արարատին, //Սին շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա //Եվ մամռած նայե իմ Արարատին...»։ [15] Բանաստեղծի հայրենադրունումի և հայրենագտնումի մերժին ձգտումը համահավասարվում է միասիցիզմի. ընդ որում՝ հայրենավերագտնումի ոգեղեն ճանապարհին ուղեկից է ժամանակային կոնկրետ պահի տեսլականը, որ էրգի տանող գաղափարի ճանապարհի վերջնակետն է.

Ինձ էլ բերեք այն սուրբ ձյունից՝ իմ հուշերի արցունքով,  
Երբ կազատեք՝ լուրս ինձ բերեք ոչ թմբուկով, ոչ շուրով,  
Քանզի սիրու շատ է մաշվել Արարատի կարուտից,-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՇՏՈՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Որ չմեռնեմ խնդրությունից՝ լուրն ինձ բերեք շշուկով...[16]

Զգայությունը հասնում է զգայավառության, զգայավառությունը՝ տեսիլի, տեսիլը՝ ներկայի մեջ եղավորվող գալիքի կոնկրետ պատկերի: Բանաստեղծը խոտում է գալիքի սահմանից: Անցյալն ու ներկամ՝ որպես ժամանակային կոնկրետ տարածքներ, նրա պոեզիայում առկա են որպես գալիքի եղրեր: «Ծիրազի ստեղծագործությունը ոչ թե պատմություն է կամ անցյալի հոլոց, այլ բանաստեղծական գալիք» [17], - նկատում է Ս. Աղաբարյանը: Ծիրազի հայրենասիրական բանաստեղծության նշանակեալ ազգային գալիքի նախանշումն է.

Որդիներիս Աղթամարա վանքում պիտի պսակեն,

Մայր Անիիս ավերակի՝ կյանքում պիտի պսակեն,

Ոչ ուրիշի ծովն եմ տենչում, ոչ նույնիսկ հովն ուրիշի,

Նավակներս Վանա ծովիս գրկում պիտի պսակեն: [18]

Ազգային գոյաբանության վերելք իմաստավորող խորհրդանշական պահի պատկեր առարկայանում է հայրենիքի վերամիավորման համազգային ստորև համապատկերում. «Ու մենք կպարենք սուրբ հարսանիքով //Սախիս վրա հայոց քոչարի...»: [19]

Մասիսապատումը ազգային կեցության հիմքերը խորացնող ծրագրային պոեզիա է՝ նպատակամիտված ծողովորի հոգեբանության մեջ ամուր պահելու պատմական հայրենիքին տեր կանգնելու վճռականությունը. «Ուկեցրած այն թասն եմ քեզ, որ վաղն ընպես ծովի Վանա...»:[20]

Ծիրազի հայրենասիրական պոեզիայի հիմնահարցերից է ժամանակի ու տարածության պատահականությունների քնահաճույքին դատապարտված սփյուռքահայության հիմքության պահպանման խնդիրը: Որպես երաշխիք՝ վերամիաստավորվում է լեզու-հայրենիք միասնությունը. «Ով Արարատ ունի սրտում՝ իր հայ լեզուն չի մոռանա»: [21] Սպիտակ ջարդի դեմ Ծիրազը բարձրացնում է պատմական հայրենիքի ազատագրման և սկյուռքահայության վերադարձի գաղափարը. «Քարավանվենք ազգովին դեպի Մասիսն իմ հույսի, //Սստերն իբրև մոմ վարենք զմբերի տակ Սախիս»:[22] Ազգային բարոյական մեծությանը գուգակչիք՝ Ծիրազն ընդգծում է քանակական գորության անհրաժեշտությունը՝ որպես կորուսյալ հայրենիքի հրավաքադարձական պահանջատիրության պայման. «Մեկին յոթը թե ծնեք ծեր արյունից, //Լոկ այն դարում մայր հողը եւ կմլեք ոսկիսից»: Ազգային վերելքի ճամապարհին Ծիրազը հրապարակախոսական հնչեղության է հասցնում ազգի հավաքականության սկզբունքը. «Ազգահավաքն, իմացեք, փրկությունն է մեր միակ»:[23]

Ծիրազի՝ կորուսյալ հայրենիքի պոեզիայում մշտապես առկա է ցեղասպանության հատուցման պահանջը:

Քրիստոսին խաչող Հուդան վերածնվի՝ կխաչեն,

Մեղք կա, դարեր էլ հնանա, չի փրկվի՝ կխաչեն,

Իմ սուրբ ցեղը եղեռնողի մեղացն ամ ու ժամ չկա,

Հազար տարվա իր սև մեղքն էլ ով չքավի՝ կխաչեն: [24]

Ցեղասպանության հիշողությունը, որ մշտապես ուղեկցել է բանաստեղծին կյանքի ճամապարհին, ի վերջո գեղարվեստական համապատկերի է վերածվում «Հայոց Ղանթեական»-ում: Պոեմը ցեղասպանության հետքերով ճանապարհ է դեպի կորուսյալ հայրենիք. Եղեռնապատումի տեսլապատկերներին գուգահեռ՝ Ծիրազը քանդակում է հայդուկային շարժման առասպելական հերոսներին: Վրեժի ու հիշողության ցավի ներքին ցատումով բանաստեղծն աղաղակում է.

Ես էն դարի սրտին պիտի

Փորագրեն, որպես վերքեր,

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Երկու միլիոն հայ անուններ...

Ու ոստի սրտին պիտի

Ես դեռ փորեմ, փորեմ, փորեմ,

Որպես վիհերն Արարատի,

Երկու միլիոն հայ անուններ...[25]

Շիրազն իր մեծ ժամանակակցի՝ Սևակի նման դարնում է ցեղասպանության զանգահարը՝ եղեռնը պատմականորեն ներկայացնելով որպես հողագնդի՝ հասուցման չդատապարտված «մեղքերի մեղքը», «դանթեական դժոխքի դժոխքը»։ Եղեռնի վերապրումը երբեմն հղորանում է այնաստիճան, որ դարնում է բնաշխարհիկ պատկերային գլուխի հիմք, ինչպես՝

Հայ լեռնապարը իր հայր Սասիսին

Պարբաջի արել, պարում էր անցավ,

Երր լսեց հայոց եղեռնի մասին,

Կանգ առավ իսկոյն, վշտից քարացավ...[26]

Կամ՝ «Ու գնում էինք, և ամեն ասուա // Հայ մանուկների աչք էր ինձ թվում...»:[27]

Բնաշխարհիկ պատկերի հենքին աստիճանաբար ծովալում է նաև բանաստեղծի քնարական կերպարը։ «Մեծ Սասիսը զանգ է վսեմ, ես իր լեզվակն եմ Սիս՝ // Պիտի ցմահ զանգահարեմ՝ ազատեմ հողն ազգիս»։ Սասիսներով ամբողջանում է հիշողության մեջ վերապրող հայրենիքի համապատկերը՝ Սասուն, Աղքամար, Քինզյոլ, Տիգրանակերտ, Կարս, Կարին, Բաղեշ, Բերկրին, Մուշ, Խուուր, Ակն, Տարոն...

Ինքնավերագտնման և ինքնառողնման հունով շարունակ զնթացող Շիրազի հայրենասիրական բանաստեղծության հանգրվանը՝ «Վերջին իղծս» պատզամ-բանաստեղծությունն է։ Անվերջ իր ծագումնաբանության կորուսյալ ակունքներին դարձնալու և միաձուվելու խոհազգայությունն ի վերջո ծնունդ է տալիս մի բանաստեղծության, որ ոչ թե չկայացած նվիրումի և ավարտվող կյանքի վերջերգ է, այլ մահից սկզբնավորվող նոր կեցության նախերգ։

Կեցերորդ բուրն հույսով տարեք սերմեք Սասնա սարերին,

Որ նա Սասնա էպոս դառնա հաւանի գալիք դարերին։

Յոթերորդ բուրն իմ մոխրի որպես փյունիկը սրտիս

Դուք շաղ տվեք հազարագանձ ավերակում Անիիւ։

...Առաջին բուրն ու վերջինը Արարատիս խառնեցեք,

Որ Հայաստանն այս կողմ բերեմ, որ չմեռնեմ ես երբեք...[28]

Զգայական վերելքների և ընդգրկումների անհատականությամբ, գեղագիտական ուրույն տեսակով Շիրազի հայրենասիրական պոեզիան տարերային եղևույթ է 20-րդ դարի հայ բանաստեղծական անդաստանում, որ մշտապես կառ է պահելու էրգիր տանող ձամապարհի կերպները։

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, Եր., 1981, էջ 144:

2. Նույն տեղում, էջ 241-242:

3. Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, հ.3, Եր., 1987, էջ 463-464:

4. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, էջ 216:

5. Նույն տեղում, էջ 196:

6. Նույն տեղում, էջ 144:

## **ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ՂՈՏԱՆԻ 2015**

7. Նույն տեղում, էջ 306:
8. Նույն տեղում, էջ 203:
9. Նույն տեղում, էջ 100:
10. Նույն տեղում, էջ 164:
11. Նույն տեղում, էջ 195:
12. Նույն տեղում, էջ 194:
13. Նույն տեղում, էջ 132:
14. Շիրազ Հովհ., Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1982, էջ 345:
15. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, էջ 196:
16. Նույն տեղում, էջ 311:
17. Աղաբաբյան Ս., Խ դարի հայ գրականության գուգահեռներում, գիրք 2, Եր., 1984, էջ 242:
18. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, էջ 319:
19. Նույն տեղում, էջ 200:
20. Նույն տեղում, էջ 326:
21. Նույն տեղում, էջ 43:
22. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 2, էջ 274:
23. Նույն տեղում:
24. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, էջ 328:
25. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 2, էջ 329:
26. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, էջ 199:
27. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 2, էջ 331:
28. Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, էջ 164:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Արարատապաշտությունը որպես գեղագիտական դավանանք  
Նարինե Հովհաննիսյան**

Արարատապաշտությունը որպես ծրագրային դավանանք խորհրդահայ բանարվեստում և, առհասարակ, ազգային գաղափարաբանության մեջ հրչակեց Հովհաննես Շիրազը: Հայրահարելով պարտադրվող գաղափարական սահմանափակումները՝ Շիրազն ազատագրեց հայրենասիրական պոեզիայի ներքին տիրությունը, ոգի ներարկեց ազգային բեկված հոգեբանությանը, տվեց ազգային ինքնավաստահություն՝ խորհրդային միապետության քաղաքական պայմաններում հնչեցնելով իր էրգի օրինական ժառանգության պահանջատիրության արդար պոեզիան: Շիրազն անհատականանում էր հայրենասիրական պոեզիայի պատմական ընթացքի մեջ ոչ միայն հույգերի անմիջական հորձանքով, բնական ռիթմով, ժողովրդական կենսախոհությամբ ու պատկերավոր պարզությամբ, այլև գաղափարագեղագիտական հստակ ծրագրով:

**Բանալի բառեր՝** ծրագրային պոեզիա, գաղափարաբանություն, արարատապաշտություն, ազգային ինքնավաստահություն, պատմական գործընթաց, հայրենիքի ողի, ներքին շրջանակներ, իշխող վարչակարգ, ժողովրդական կենսախոհություն, զգացմունքայնություն, հույգեր, տագմագներ:

**РЕЗЮМЕ**

**"Ааратопреклонство" как эстетическая религия**

**Нарине Ованнисян**

"Ааратопреклонство" как эстетическую религию в советской поэзии и, вообще, в национальной идеологии провозгласил Ов. Шираз. Преодолевая границы господствующего строя, Ов.Шираз освободил внутренние рамки патриотической поэзии, вдохнул жизнь в разбитую психологию нации, придал национальную самоуверенность советской монархии, в политических условиях озвучивал правдивую поэзию, законно унаследованную его страной. Ов.Шираз отличается не только тем, что придал историческому процессу поэзии чувственность, волнение, тревогу с народными раздумьями, с образной простотой, но и четкую идеологическо-эстетическую программу.

**Ключевые слова:** *программная поэзия, идеология, Ааратопреклонство, национальная самоуверенность, исторический процесс, дух родины, внутренние рамки, господствующий строй, народные раздумья, чувственность, волнение, тревога.*

**SUMMARY**

**"The Worship of Ararat" as an aesthetic religion**

**Narine Hovhannisyan**

"The worship of Ararat" as as an aesthetic religion in the Soviet poetry, and in the national ideology in general was proclaimed by H. Shiraz. Mounting over the ruling system H.Shiraz released internal framework of patriotic poetry, breathed life into the nation's shattered psychology, added self-confidence to the Soviet monarchy, ventilated in political terms the true poetry that was legally inherited by his country.

H.Shiraz is notable not only because he added to poetry not only sensuality, excitement, anxiety with folk meditations, with imaginative simplicity, but also clear ideological and aesthetic program.

**Keywords:** *programm poetry, ideology, "the worship of Ararat", national self-confidence, historical process, the spirit of motherland, internal limits, the ruling system, folk meditations, sensuality, excitement, anxiety.*